

ՄԱՍԻՍ

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

507 ՏԱՐԻ, ԹԻԻ 28

(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

14 ՅՈՒԼԻՍ 1901

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԵՍԵՍԻ ՄԸ ԱՌԹԻԻ	Շ. ՇԱԽԱՐՇ
ԱՆՕԳՈՒՏ ԽՕՍՔԵՐ (Բանաստեղծութիւն)	ԱԼՓԱՍԼԱՆ
ԳԵՂԵՅԿԻՆ ՀԱՆԴԵՊ	ՄԷՐՍԷՏԷՍ
ՏՈՔԹ. ԼՈՆԿ	ՏՈՔԹ. Թ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ
ՀԷՔԵԱԹ. Ճանն վարդ աղջիկը	ՅՈՎՀ. ԴՍԶԱՆՃԵԱՆ
ԱՐՀԵՍՏԸ ԱՐՀԱՄԱՐՀՈՒԱԾ	Ե. ԶՍՎՈՒՇԵԱՆ
ՅՈՒՇԱՏԵՏՐ	

Մասիս շաբաթաբերի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար ԲԱՌՍՈՒՆ ղրԸ. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղրԸ., կանխիկ վճարելի : Արտատպագրման 12 Յրանք կամ 5 բուլլի : Թղթատպագրման ծախսը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն : Մասիս հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պահչե-Գաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն հոլ :

Չեմքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՑԷ

درعليه ده غلطه ده « ماسيس » غزته سى اداره سى

ԽՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ « ՄԱՍԻՍ »

Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորաստուկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ՏՈՔԹ. Գ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալաքա-Սեբայի Լիսեին դէմ

Ամէն օր ժամը 5—11 (Ը. Թ.)

Կիրակի օրերը ժամադրութեամբ

Մ Ե Տ Ա Ք Ս Ի

ՄԱՆԱՐԱՆԱՏԵՐԵՐՈՒՆ ՅԱՏՈՒԿ

Բ Ր Ո Վ Է Թ Ն Ե Ր

Կ Շ Ի Ռ Ն Ե Ր

Ճ Ա Ն Կ Ի Կ Ն Ե Ր

Հ Ա Տ Տ Է Ն Ե Ր

Մեր քով պատրաստ կը գտնուին խիստ չափաւոր գիններով: Եւ ուրիշ ամէն տեսակ յանձնարարութիւնք եւրոպայէն բերել կը տրուին փութով եւ ճշգրտութեամբ:

Հասցե. — Ա. ՓԱՆՈՍԵԱՆ Եւ ԸՆԿ.

43 — Քէօքրիւլիւ խան, 43 — Կ. Պոլիս

Կեդրոնատեղի ՇԱԿԷՆԻ մշտանոս գրչածայ-
րերու: 5—5

Ի Ի Ն Ի Յ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828—1829

ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000 Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Գրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻԻՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000 Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը **ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՉԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:**

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները: Շահարաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրուողք **ՉԵՐՇ** են այն վնասներէն եւ յուսախաբուրքիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահարաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեմամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաքա, Թահսապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը

Գործակալութիւնք Թուրքիո գլխաւոր քաղաքաց մէջ


ՄԱՍԻՆ

50^{րդ} ՏԱՐԻ

— 14 ՅՈՒՆԻՍ 1901 —

ԹԻՒ 28

ՅՈՒՆԵԼԵԱՆԻ ՄԸ ԱՌԹԻՒ



Սովորութիւնը կը պահանջէ որ գպրոցականի մը էն գծուարին ու յոգնեցնող օրերը՝ տարւոյն կիսուն , այրող ու հալեցնող միջնորդի մը վերապահուն . մեր անցուցած քննութիւններու վերջուցումը կ'արթնցնէ մեր մտքերուն մէջ — անցեալի հետաւորութեամբը քաղցրացած — յիշատակը տեսակ մը բարոյական տարտամ խոնջէնքի ու ֆիզիքական քրախնքով օծուած ու կամքէ զուրկ թուլութեան մը :

Մօտէն ու հեռուէն եկեղեցականներ՝ պատկասելի երեւոյթով , կապոյտ ակնոցներով պատուելիներ , հայեր սրունց ազդեցութիւնը կուգայ միտքարուիլ ու փայփայուիլ իրենց զատկներուն տանելիք գպրոցական յաղթանակներովը , տաքէն ու արեւէն քացիւած , ուրախութեամբ կը վազեն դիտել սիրտմաշտ քը հարիւրաւոր աղաքներու սրունք անոնց քինախոնքի աչքերուն տակ կը դուլան ու կը կակաղեն . Բաղդը հոս ալ իր դերը ունի . քիչ թէ շատ խեղացի պատանի մի պիտի կուահէր հոն ինչ որ իրեն կը սպաս իրական կեանքի մէջ . յաճախ ամէնէն խղճամիտ ու աշխատող աղան խիստ ակնարկի մը տակ , կամ դասատուին եւ կամ ստամոքսի խանգարումէ նեղող քննիչի մը սուր ու անճաշ դիտողութեան մի առջեւ կը կորսնցնէ թելը իր գաղափարներուն , ու գինքը շանթահարող հարցումին առջեւ ապշած դէմք մը կամ ամօթի արցունքներ կը ցուցադրէ . պարտաւ զլուսի մը ընդհակառակը՝ իր վստահ

ձեւերովը պիտի կրնայ իր տգիտութիւնը ծածկել ու գովեստներու արժանանալ . վաճառականութեան սգին կանուխէն կրող աշակերտը կը ջանայ ծախու առնուելիք — չողորթութեամբ , նուէրներով — կամ շատ երկշտ դասատուները սրտել ու վարպետութեամբ անոնց թելադրել իրեն ըլլուելիք հարցումները , աստղարաշխութեան կամ բնագիտութեան դասատուն պարապ տարի մը չքաւորութիւնը ծածկելու ու իր համարը անաղարտ պահելու համար հաճութեամբ պիտի խոստանայ իր աշակերտին դիւրութիւններ տալ . ու քննութիւններու շարքը կը պարզուի ընդհանուրին . դրուատիքներուն մէջտեղ :

Այս օրերու յիշատակը քաղցրութենէ զուրկ չէ սակայն . այդ ահագողք գիշերներու , մինչեւ ուշ տուն կազի լուսով գլխիկոր աշխատութիւններու ու արշաւայտին հետ արթննալու ջլատումը , մոռցուած կամ երբեք չսիրուած դասերու մէկ քանի ժամուան մէջ հապճէկով վերընթեռնումը , կարգ մը ֆօնիլներու ու նախադասութիւններու առանց հասկցուելու յերիւրումը , գառարանին առաջինը ըլլալու տենդոս լաղձանքները , ծնող օրուան անակնկալներով ու բաղդին գաղտնիքներով բեղուն ըլլալը , եւ հետապատկերը արձակուրդին , այդ երկար , ծուլութիւն ու պարտաւորութիւն բուրող արձակուրդին , ուր հակառակ մտադրուած խոտուամներու՝ դասագիրք մը չի թղթատուիր ,

այս ամէնքը յանկուցիչ թուական մը կը դարձնեն տղու մը մտքին՝ տարւոյն այդ օրերը։ Պէրպէրեանի այս տարւոան սաները կրկին գոհունակութիւն մը կրնան ունենալ, քանի որ իրենք բազմը կ'ունենան 25 տարւան՝ մեր մէջ անտվոր կերպով՝ անընդհատ ու բեղմնաւոր շրջան մը փակելու։ Նոյն միջոցին ու անկէ առաջ շատ ուրիշ նմանօրինակ ձեռնարկներ ունեցած ենք, ոմանք փայլուն, ոմանք ծննդենէ իսկ դատաւարտուած, բայց ոչ մէկը առած է մեզ սփոփիչ տեսարանը այսպիսի տեսականութեան մը։ Ռէթէս է ֆ. Պէրպէրեանի կատարած կրթական գործը մեծ է։ Ազգը միահամուռ շնորհաւորութեան պարտք մը ունի անոր։ Աւուրեայ գեղարվեստն ու ճղճիմութեան ծովուն մէջ անիկա կրցած է, բարոյական խոշորոտներու, նիւթական ժայռերու մէջ տեղէն ճարտարօրէն նաւարկել առանց բնկողմելու, առանց խրելու։

Պէրպէրեան է ֆ. գովեստը ընելու մտադիր չեմ. անոնք որ աշակերտած են իրեն, անոնք որ զինքը մօտէն ճանչցած են, անոնք որ իրեն մօտիկ ըրած են, գիտեն այն մաքնիտական զօրութիւնը, այն հրապոյրը որ կը բղիթ անկէ եւ որ կը յանկուցանէ, կը հիացնէ իր ունեկիրը կամ խօսակիցը ու միանգամայն անոր ակնածանք ու յարգանք կազդէ։ զըստրոցին մէջ «Տնօրէն» բառը վախ ու սէր կը տարածէ միանգամայն, եւ ճշմարիտ մեծութիւնն է միայն որ այդ երկու անհաշտ զգացումները ի մի կը ձուլէ զինքը հասկցող սրբերու մէջ։

Իր դպրոցին վրայ հազիւ մէկ քանի տող պիտի գրեմ. անիկա ունի իր պակասութիւնները — ինչպէս ամէն երկրային բան — բայց ասոնք Տնօրէնին կամքէն անկախ, անոր նիւթական միջոցներու սահմաններէն դուրս են. ահա ասոր համար Ազգը պէտք է իր շնորհաւորութիւնը արտայայտէ՝ զանոնք լրացնելու օրինակ մը։

Երկու հաստատութիւններ կան որոնք մեր երախտագիտութեան մասնաւորապէս արժանի են. մին մեր ծերունիները ու անկարնեւորը, կեանքի յօգնածները ու ակարացածները կը պատասխարէ. զանիկա Ազգը շինած է ու

կը մատակարարէ մինչեւ այսօր. մեր Հիւանդանոցն է ան։ Միւսը կեանքի յորձանքին մէջ նեատելու պատրաստուող տկարներ կը հովանաւորէ՝ զանոնք յաջող րնելու համար. երկուքն ալ հաւասարապէս հիանալի. միոյն համար ամբողջ հասարակութիւն մը միացուցած է իր գրաւական սլոխը ու — բարեբաղդարար — յաջողած, իսկ միւսը ստեղծողը անձ մը եղած է, որ միշտի, ճգնած ու վատտակած է անխնայ, անդադար, այն փառասոր արդիւնքը ձեռք բերելու համար։ Զբաղդատենք, այլ մասած ենք։

Լրագիրներու մէջ կարդացինք թէ Պէրպէրեանի նախկին սաները կուզեն այս քառնըհինգամեայ շրջանի փակումը նուէրով մը շնորհագարդել. մտածումը ազուր է ու շնորհասրութեան արժանի. բայց ամէն հայու պարտքն է բազմքել որ այդ իրաւունքը նախկին սաներու առանձնաշնորհումը չըլլայ միայն։ Ամէն հայ անհատի իրաւունքն է ատ. պարտքը, չեմ բսեր, որովհետեւ վստահ եմ որ ոչ մէկու — որ կրնայ խորհիլ ու զգալ — միտքէն անցնի իր օգնութիւնը զանալ այսպիսի նպատակի մը համար, պարտքի մը ծանրութիւնը վերագրել անոր։ Երջանաւարտներուն թիւը սառաւ չէ. անոնց թիւը որ վարժարանին բարիքները տեսած են առանց շրջանը բոլորելու, աւելի շատ է. բայց անոնք որոնք չիման եկած են այդ երիտասարդներուն հետ, անոնք որոնք ասանց բնկերակցութեամբը, խորհրդակցութեամբը, ծառայութեամբը օգտուած են — գիտակցօրէն կամ անգիտակցօրէն — անհամար թիւ մը կը կազմեն, ու ասոնց է որ կոչում կ'ընեն։ Պէրպէրեանի սաները քիչ շատ ամէն երկիրներու մէջ ցրուած են իրենց հետ տանելով լոյս-աղբիւրէ նշոյլ մը, ցոլք մը։ Մասնախումբը որ ձեռք առած է այս խնդիրը, ոչ միայն կոչում ընելու է անոնց անհատապէս, այլ անոնց միջոցաւ ամէն Հայերուն. ամէն տեղ ուր Պէրպէրեանի նախկին աշակերտ մը կայ, հրաւիրելու է իր գաղթակիցները մասնակցիլ այս կրթական նուէրին։ Մասնախումբին ծրագիրը նախկին յօբելեաններուն վրայ անհուն առաւելութիւն մը ունի. հաւարականութեան զաւաւսարը։ Հին զգայնատութիւնը անպի տալու է ա՛լ. Երբե-

եարի մը տասներկու հատ ոսկի գրիչ ու վեց հատ եղեգնաքարէ կաղամար տալով չէ որ իր ծառայութիւնը պիտի գնահատենք : Մեծ նուէրի գաղափարը մեր մէջ մինչեւ հիմայ կը պակսէր . պէտք է վարժուինք անոր : Մի՛ կարծէք թէ Քարնէկի մը փարթամ՝ նուէրները կերազեմ . մեր կարողութեան չափովը միայն . բայց մինչեւ հիմայ սխալ ճամբայ մը բռնած էինք : Նրբ վարժարանի մը նիւթական պէտքերը աչքի առջեւ ունենանք , այն ատեն կրնանք հասկնալ անպէտքութիւնը ցրուած գնահատումներու :

Նրկու ամերիկեան վարժարաններ , Պոլսոյ մէջ , իրենց շքեղութեամբ կը շլացնեն մեր ծնողքներու աչքերը . անոնցմէ կարողները փոխանակ մեր դպրոցներուն ընծայելու իրենց օժանդակութիւնը , օտարները կը քաջայերեն , իրենց գաւակները յանձնելով անոնց խնամքին : Մեր աղջիկներու կրթարանները իրարու ետեւէ ոչնչացան , այս անհաւատարմիցման առջեւ . մեր ապագայ մայրերուն ցեղային կրթութիւն մը տալ խնդրէ դուրս է ալ . այս մտածման առջեւ ամօթի կարմիրը ամէնուս ճակատը պէտք է շառագունէ . ժամանակ է ասոր դարման մը գտնելու : Մինակ հիւանդներուն հոգ տանելով մեր պարտքը կատարած չենք ըլլար . մեր ո՞ր հարուստը քառսուն հատ վերմակ զրկած պահուն Հիւանդանոց , մտքէն անցուց պատկեր մը , գրադարան մը , քիմիական գործիք մը նուիրել մեր վարժարաններէն մէկուն . դպրոցներու մէջ Արուեստի ներկայացման պակասութիւնը ցաւալի իրողութիւն մըն է . չեմ յիշեր տեսած ըլլալ որ եւ է դպրոցի մը պատին վրայ մեծ վարպետի մը գործերուն գոնէ ընդօրինակումները . Ռաֆայէլի մը , Պօթիչէլիի մը , Ռամպրանտի մը , Բօրոյի մը , Բօսէթիի մը գործերը ինքնին դաստիարակութիւն մը կը կազմեն . անոնցով տղուն հոգին կանուխէն գեղեցիկն պաշտամունքը կը սորվի . մեր մէջ իսկապէս արդիւնդ հոգի մը ունենալու է պատկերները սիրելու համար . դպրոցէ վերջ անձնական անհամար ճիգերու ու նեղութիւններու շնորհիւ . մեր ուսումնաւարանները գեղարուեստի այդ ճիւղը ցաւալիօրէն կանգնաւ . իրենց ըզձանքները , հոգեկան սրացումները , ազուո-

րին անգիտակից կարօտները չունին միջոցը յագեցնալու նկարչութեան ու երաժշտութեան գլուխ-գործոցներուն տեսքին ու ունենդութեան մէջ . անոնց հիացման կարողութիւնը — կեանքի էն նուիրական , էն բարձրացնող ու ազնուացնող կարողութիւնը — կանուխէն , չուտով ու առ յաւէտ կը փճանայ : Փորագրութեան նորանոր կատարելագործութիւններու շնորհիւ մեծ նկարիչներու հրաշակերտները հիմայ բաղդատաբար դիւրամատչելի դարձած են՝ գոհացուցիչ ընդօրինակութիւններու ձեւին տակ : Անոնք որ օրինակի համար , հաւաքական ձեւէն դուրս կուգնեն յայտնել յորեւարին՝ իրենց երախտագիտութիւնը , ազուար ու օգտակար գործ մը բրած պիտի ըլլան այս գեղեցիկ պատկերներէն մին կամ աւելին ընծայելով , ու ասիկա թաւապատ աթոռ մը նուիրելէ աւելի գնահատելի պիտի ըլլայ :

Նոր չէնքի մը կառուցումը պիտի ըլլայ Պէրպէրեան մասնախումբին նպատակը . այս ծրագրին չվիժելուն պէտք է հոգ տանինք . չէնքի կարեւորութիւնը մեր աղոց կեանքին համար մեծ է . մանաւանդ անոնց համար որոնք ցերեկ ու գիշեր ստիպուած են նոյն յարկին տակ անցընել . կենսական խնդիր մըն է աս . Հիւանդանոցի հիւրերը չչտացընելու առաջին միջոցն է դպրոցին մէջ առողջ սերունդ մը պատրաստել . խնուած ննջարան մը ամբողջ կեանքեր պիտի թունաւորէր անդարձ կերպով . աղտոտ ճէմիչներ ու քաշահոտ քուրումներով ապականուած դասարանները թուքախալ , ժանտատենդի եւ ուրիշ ախտերու սերմերը պիտի մուծէին մաքուր օդի կարօտ մատաղ թոքերու մէջ . ջուրի ու ըզարաններու պակասութիւնը դեռ կազմութեան չրջանին մէջ եղող մարմինները՝ ներսութեան մէջ փոքեցընելու պատճառ կ'ըլլայ : Հիւանդանոցին չէնքերուն օգուէտ ու առողջարար ըլլալուն պէտքը զգացած ենք , եւ սակայն մեր դպրոցները ախտի վիճակէ դուրս հանելը մտքերնուս չէ անցած :

Ահա առիթը կը ներկայանայ փորձ մը ընելու . պզտիկ արտայայտութեամբ մը չբաւականանանք . երկու դասարան ու ննջարան մը շինելով ինքզինքնիս չգոհացնենք : Մեր

տղաքներուն կեանք չզլանանք . ասոր համար է որ մասնախումբը պէտք է ամէնուն դիմում ընէ անխտիր , ասոր համար է որ լրագիրներուն ամէնքը , առանց զանազանութեան , առանց ո՛ր եւ է նկատում , բանալու են իրենց սխնակները . ամէնէն պզտիկ նուէրը ինչպէս ամէնէն մեծը հոն ընդունուելու են : Այս հրապարակութիւնը չպիտի վերադառնայ Պէրպէրեան էֆ.ի արժանապատուութիւնը , որովհետեւ ասիկա ամէնուն յարգանքին մէկ տպացոյցը պիտի ըլլայ . այս հանգանակութիւններու դրութեան մեծութիւնը Անգլիոյ ու Ամերիկայի մէջ հիմնադր-

օրէն հասկցում է . Արդար չէր լրագրական այն բոլորքը որ նոյն իսկ քանի մը անձերու նուիրատուութիւններու հրապարակուիլը իբր համեմատութեան հակառակ կը նկատէր : Ամօթի զգացումը հոս անաեղի է . ողորմութիւն մը չէ այս , այլ վարձատրութիւն մը . եւ այն կրթական վաստակաւորը իր տարուէ տարի հանգիստաւոր հերոցով մրցանակներ կը բաշխէ իր աշակերտներէն էն արժանաւորներուն , պիտի հասկնայ գնահատել այն մրցանակը զոր Ազգը խմորվին իրեն արժանի կը գտայ :

Ե. ՇԱՒԱՐԵ

ԱՆՕԳՈՒՏ ԻՕՍԻԵՐ

ՆՈՐ ԳՐՈՂՆԵՐՈՒՆ

Տըղաք , ողջոյն ձեզ , ողջոյն սրտագին ,
Ձեզ որ կը գրեիք հոս հոն , ամէն օր .
Անխոնջ , անքսալառ խանդով — ա՛յս քափն —
Բերքով , օրագրով , բնագրասնե՛ր հոր .
Ողջոյն ձեզ , տըղաք ,
Մենք կը խաւարինք , դուք՝ հոր կը տըղաք :

Կ'անցնի կեանքն ա՛յնքան արագ , անցումար ,
Ձերդ յարդի շիւղ մ'որ հոսանքը քանի ,
Որ այսօր *հորն՝ հի՛ն* է վաղուան համար ,
Այսօր ձերն՝ երէկ կոչուէր պատանի .
Դուք ալ , ո՛վ տըղաք ,
Սրտկուան խլիզներ՝ այսօր մարդ եղաք :

Եւ բնութեան անցարժ , արդա՛ր օրհնով ,
Ինչպէս որ մենք ալ կ'ընենք երբեմն ,
Սրտալներ զսնել երեցներուն փով
Որոնք գրաւեին գրաւական մեր բեմն ,
Այժմ ալ , դուք , տըղաք ,
Հիմներուն գլխուն քաւեր կը տըղաք :

Եւ հանելով շաւ վրլվրլուկ , աղմուկ ,
— Արուարձաններէն , Պոլսէն , գաւառէն —
Սիգապանձ լեռներ ծընին մէյ մէկ մուկ . . .
Որք միմեանց քին կնդրուկ կը վառեն
— Գիսցե՛ք որ , սըղա՛ք ,
Անպէճ , անազնիւ խաղ մը կը խաղա՛ք :


Փոխան ձաղկելու՝ սարէն ու ձորէն՝
Հիներուն լեզուն , ոնն ու մեակած սեռն ,
Եթէ ձեզ յագուրդ չի տար մեր ցորեն ,
Բերե՛ք ձեր արտին լուբիան ու սխեռն . . .
Որպէս զի , սըղա՛ք ,
Ձեզմով պարծի գէթ ձեր . . . գիւղաճաղա՛ք . . . :

Հմտութիւն , արուեստ , նուրբ հաշակ , տաղանդ ,
Ձեր չիհաւնածներն ունին շաւ կամ քիչ .
Իսկ՝ զբրողներու հանդէպ նորադանդ ,
Ձեզ նրման՝ չունին հեզնութեան քրքիշ .
Անոնք , ո՛վ սըղա՛ք ,
Ցաւ կ'զգան անկեղծ՝ երբ դուք կը կաղա՛ք :

Կ'ուզեն որ , ազնիւ սիրտով ու միտքով ,
Ձեր հեզքիս ոյժին , արժեքին գիտակ ,
— Ո՛չ ամբարտաւան , ո՛չ ալ ինքնագով —
Ձը գրե՛ք ինչ որ գայ ձեր գրչին տակ .
Կ'ուզեն որ , սըղա՛ք ,
Խորունկ ջուրերու մէջ շաւ չի լողա՛ք . . . :

Կ'ուզեն որ հայ Գրոց դաշտերն անսահման ,
Ուր այնքան հողեր կան , կո՛յս տակաւին ,
Հերկե՛ք , մրեակե՛ք . . . հիներուն նրման ,
Մինչեւ որ ըլլա՛ք դո՛ւք ալ տակաւ . . . հի՛ն .
Կ'ուզեն որ , սըղա՛ք ,
Դեռ չըխաւարած իրենք՝ դուք շողա՛ք :

ԳԵՂԵՑԿԻՆ ՀԱՆԴԵՊ



Գիւղ երթալը անուշ բան է այս տաքե-
րուն, անանկ չէ՞. աղուոր օդ, աղւար ջուր,
աղուար ծով, ծառեր սրունք լեռներն ի վար
խոյացող սիւքերէն կը հովթիին՝ մեղի ու
հրապուրտ խաղափով մը իրենց սէրերը եր-
գելով, ծաղիկներ ամէնդի, ամէնքն ալ նախ-
շուն, ամէնքն ալ խառուտիկ, զուլալ առ-
ուակներ հոս ու հոն, արեւ մը որ ամէն բան
ակնապարար ոսկիով մը կը ջնարակէ, թրւ-
ջուններ՝ սրունք ասուլիաներուն ամէնէն քաղց-
րը կը ցանցեն պարտէզի մը անկիւնը, կամ
թիւռուքներու մէջ, ու վերջապէս կանան-
ջուտո, ոսկեսար բնութիւն մը ուր ամէն բան
կը ժպտի, ուր ամէն բան կը փալթիլայ ինչ-
պէս փոսուռները գիշերուան սեւտուտիկն
մէջ :

Բայց նուրը առանց կուտի հէքեաթները
միայն երգած են. կեանքը ո՞ր չպիտի ու-
նենար իր անհաճոյ կողմերն ալ : Գիւղ եր-
թալ աղէկ, սակայն այդչափ հրապուրներու
եւ առաւելութեանց քով անպատեհութիւն-
ները չէ՞ որ պիտի պակսէին, ինչպէս օրինա-
կի համար մարդկութեան սա վաղընջուց ծա-
նօթը՝ Զածրոյթը՝ զոր ոչ օդը կրնայ մեղմել,
ոչ ջուրը, ոչ ալ անշուշտ թռչուններու ասու-
լիւն ու ծառերու խաղափը :

* * *

Անոնք որ այս տարի Գրնալը գացած են
ամառուան եղանակը անցընելու, կ'երեւայ
թէ բանուեր են այդ ձանձրոյթէն, ու բնու-
նուեր են անանկ սաստիկ՝ որ անկէ ազատե-
լու համար այս պահուստ իրենցմէ ոչ ոք ու-
շադրութիւն կը դարձնէ այդ մարգրիտ-կող-
զիին շնորհներուն, ինչպէս նաեւ բնութեան
գեղեցկութեանց :

Պատմութիւնը պէտք եղած էն աւելի հե-
տաքրքրական է, ու կ'արժէ զայն արձա-
նադրել :

Երեւակայեցէ՛ք, ընտանեկան հաւաքման
մը առթիւ, տուն մը կը ներկայանան quête ի
եւած երկու մայրապետներ, մէկը տգեղ՝ միւսը
գեղեցիկ : Տգեղը՝ որ առաջ կը ներկայանայ՝

կը յաջողի հոն գտնուող էրիկմարգէ՛մը քա-
տորդ մը փրցնել. մինչդեռ անոր հետեւող
գեղեցիկին միեւնոյն անձը չի վարանիր ձեռքի
լայն շարժումով մը երկու քառորդ մէկանց
նուիրելու :

Տարբերութիւնը զոր նուիրատուն գրած
էր գեղեցիկին ու տգեղին միջեւ, բնականա-
բար աչքի կը զարնէ եւ ահագին վիճարա-
նութիւն մըն է կը սկսի. ձանձրոյթէն չլմորած
մարդոց վիճարանութիւն՝ որ քիչ անգամ
վերջ կը գտնէ : Տան մէջ գտնուողները երկու
մասի կը բաժնուին իսկոյն. մէկ մասը իրա-
ւացի կը գտնէ նուիրատուին բրածը, ասոր-
կեղծ թէ գեղեցիկին հանդէպ մարդ միշտ իրա-
ւունք ունի քիչ մը աւելի չափը բլլալու նոյն
իսկ բարեգործութեան մէջ, իսկ միւս մասը, —
հարկաւ մտերմօրէն, — կը պախարակէ այդ
ընթացքը, մինչեւ անոր մէջ անբարոյակա-
նութեան թեթեւ տեսակէտ մը գտնելու աս-
տիճան :

Այս պահուստ, ամբողջ կզգին երկու մասի
բաժնուած, կատաղի մարգնութեամբ մը այդ
խնդրով կը զբաղի :

* * *

Հոս մէջ չեմ բերեր լուր արն կարծիք-
ներն ու տեսութիւնները՝ սրունք այդ առթիւ
ամէն օր կը պարզուին կզգին մէջ :
Բայց միւս կողմէ կը մտածեմ թէ այդ
վիճարանութեան տակ պահուած է գե-
ղաբնական շատ բարդ խնդիր մը, որ հե-
տաքրքրական բլլալուն չափ ալ կրնայ կարե-
ւոր նկատուիլ, մարդկային կեանքին հետ իր
ունեցած սերտ առնչութեան պատճառաւ :
Ըսէ՛ք, չահեկան չէ՞ գիտնալ թէ՛

Ա. — Պե՛տ Կա՞յ զանազանութիւն մը դնելու
գեղեցիկին ու տգեղին միջեւ, երբ երկուքն ալ
միեւնոյն հանգամանով ու նպատակով կը
ներկայանան, զոր օրինակ նուե՛ր մը հաւա-
քելու կամ քիչ մը բան մուտալու համար :

Բ. — Նքե այո՛, ինչո՛ւ. երբ ո՛չ ինչո՛ւ :


Ու կը մտածեմ հարցումի մը հանգաման-
քը տալ խնդիրը գրկող այս երկու տեսակէտ-
ներուն, եւ զանոնք Մասիսի ընթերցողնե-
րուն ներկայացնելով, խնդրել որ հաճին
պարզել այդ մասին իրենց ունեցած կար-

ծիրներն ու տեսութիւնները, որոնք կրնան գեղադիրտորէն շատ հետաքրքրական ու կարեւոր ուսումնասիրութեան մը իրր հիմ ծառայել:

Աւելորդ է ըսել թէ այս երկու հարցումներուն պատասխանելու համար անպատճառ պէտք չկայ գրող կամ կուղ ըլլալու. ամէն մարդ, ըլլայ կին կամ էրիկ մարդ, աղջիկ կամ մանչ, ու մանաւանդ... գեղեցիկ կամ տգեղ, կրնայ իր մտածածը գրել առանց քաջութեւ, վստահ ըլլալով թէ Մառիախ խմբագրութիւնը սիրով ու շնորհակալութեամբ պիտի ընդունի այդ մասին գրած ամէն պատասխան, ու մասնաւորաբար անոնք անշուշտ, որոնք ամերիկի են ու խնդրէն չեն չեղիր:

ՄԷԲՍԷՏԷՍ

Տ Ո Ք Թ. Լ Ո Ն Կ



Ռուպէրդ Գոլէճի բնական գիտութիւններու ուսուցչապետը՝ Տոքթ. Լոնկ վերջնապէս կը բաժնուի իր գպրոցէն, ծերութեան եւ տկարութեան պատճառով, Ռուպէրդ Գոլէճի ամառվերջին հանգիսին եղեր էր այս յայտաբարութիւնը, որ ատիկ կու տայ ինծի՝ իրրեւ հին Ռուպէրթեան մը հրապարակել այդ անունին հետ կապուած քանի մը կցկաւոր յիշատակներ: Ռուպէրդ Գոլէճի բոլոր ընթացաւարտները անտարակոյս տիրութեամբ պիտի լսեն մեկնումը իրենց ծերունազարդ ուսուցչին, որ իրեն յատուկ տեղն ունի անոնց ամէնուն սիրտին ու միտքին մէջ:

Տոքթ. Լոնկ բժիշկ չէ. հապա Սաստուածաբանութեան Տոքթոր: Նախ՝ իրրեւ միտիւնոր Պուլկարիա գայած է, յետոյ Պոլիս գալով Ռ. Գոլէճի առաջնակարգ դասատուներէն եղած է, երեսուն տարի շարունակ պահելով փոխ-անօրէնի ու բնական գիտութիւններու բրոֆէսորի դիրքը:

Չեմ գիտեր թէ առանց Տոքթ. Լոնկի ինչպէս պիտի երեւայ Ռ. Գոլէճը. զինքը անքան սերտիւ կապած ենք գպրոցին հետ:

Հօր մը նման կը վայելէր ընդհանուր յարգանք ու համակրանք. ուսուցիչ, ուսանող եւ սպասուոր ամէնքն ալ զինքը կը նկատէին իրրեւ հասարակաց բարեկամ:

Միջազատակ, բաւական գիրուկ, մինչեւ պորտը երկնցող մետաքսաթել մօրուքով մարդը աչքիս առջեւ կուգայ այս բուպէիս: Դէմքը զուարթ էր միշտ, թէեւ իրեն անծանօթ չէր բնտանեկան վիշտը: Դպրոցին նահապետն էր. թէեւ տարիքով թերեւս իրմէ շատ հեռու չէր Տոքթ. Ուօլպըրն, ուրիշ սակայն վախով կ'ահնաճէինք. մինչ Տոքթ. Լոնկը սիրով կը յարգէինք:

Իր պաշտօնավարութեան երկար շրջանին մէջ չեմ կարծեր թէ ո՛ր եւ ի՞նչ մէկուն սիրող ջաւուցած է այս մարդը: Զուարթ ու բարի էր, ու կարելի է աւելցնել քիչ մը չափազանց բարի՝ կարգ մը չարածճի ուսանողներու համար: Զեմ յիշեր որ ո՛ր եւ է աշակերտ մը իր աւանդած դասերուն մէջ «պայման» ստացած ըլլայ. քանզի չէր կրնար աշակերտի սիրտ կոտրել: Սաի կրնայ թերութիւն համարուիլ վարժապետի մը համար, բայց կը հաստատէ ըսածս թէ չափազանց բարեսիրտ մէկն էր. ու հոս իմ շեշտած կէտս այդ է ըսի:

Բնական գիտութիւնը իր մասնաճիւղն էր. Ռ. Գոլէճ նոր գայող եւ կրտսերագոյն (Freshman) կարգը մտնող աշակերտին համար է՛ն նշանաւոր պարագան էր Տոքթ. Լոնկի բնագիտութեան դասը: Մեծադիր կանոն անութիւն տակն առած աշակերտը կը մտնէ բնագիտութեան դասարանը: որուն չորս պատերը ծածկած են բնագիտական բազմաթիւ շողջողուն գործիքներ, որոնք հմայիչ տպաւորութիւն մը կը գործեն ուսանողին մտքին վրայ, ու մինչեւ վերջն ալ այդ գործիքներէն շատեր կը պահեն իրենց հմայքը, որովհետեւ երբեք դուրս չեն ելլեր ցուցափեղկերէն:

Հոն գրասեղանին առջեւ բազմած կ'ըլլար Տոքթորը. եւ ինչքան ալ անպատրաստ դասարանէն ներս մտնէր աշակերտ մը՝ դասատուին դէմքը վստահութիւն կը ներշնչէր իրեն: Մեր ատենը, Տոքթ. Լոնկ սովորութիւն ունէր դասի հանել մեզ՝ անուննիս կրող թուղթեր քաշելով: Ու միշտ բարեսիրտ էր.

քիչ անգամ իրար կը խառնէր այդ թղթիկները . ուստի ամէն տղայ վստահաբար կըրնար գիտնալ թէ ե՞րբ պիտի գար իր կարգը :

Գրաւոր քննութենէ առաջ ընդհանուր քաղաւած անունով քանի մը դաս կ'ուսենայինք , ու այդ դասերուն տեանք կը կտրէին է՛ն անհոգ ու անտարբեր աշակերտներն իսկ : Քանզի աւանդապէս սորված էինք թէ այդ ընդհանուր քաղաւածքին հարցումներն անպատճառ կ'երեւային գրաւոր քննութեան մէջ :

Տոքթ. Լոնկ թէեւ բժիշկ չէր , բայց իր տիպարային ու մասնաճիւղին կռթնած՝ բժիշկ կռթեան պզտիկ ու անվնաս քայլերը կ'աւնէր : Գոլէճին մէջ ստնկ ու նոնկ հիւանդութիւնները ինք անձամբ կը դարմանէր , գեղերը կուտար՝ քիմիական աշխատանոցէն : Իր հայրական հոգածութիւնովը կը զուարթացնէր դպրոցին հիւանդարանը , ուր տարին տասներկու ամիս հիւանդութենէ աւելի՝ ծուլութենէ տառապող այցելուներ անպակաս կ'ըլլային :

Բումէլի Հիսարի գիւղական բժիշկն էր՝ ծերուկ կիներ ու տղաքներ բժշկութիւն ըսելով կը հասկնային Տոքթ. Լոնկ : Անտալստ բան մը չէր աշակերտներուն համար դասարանէն ելած ատեննիս տեսնել տեղացի՝ կին մը որ լալկան տղեկ մը գրկած՝ դասարանին դուռը կը սպասէ Տոքթ. Լոնկի : Ու Տոքթորը շատ բարիք կ'ընէր այս խեղճերուն , որոնք անպատճառ աղքատ ըլլալուն համար չէր որ իրեն կը դիմէին :

Տոքթ. Լոնկ անտարակայս տէրն էր իր մասնագիտութեանը՝ բնական գիտութիւններու : Բանասիրական հմտութիւնը անուրանալի է , ինչպէս իր այլ եւ այլ ճառախօսութիւններուն մէջ կ'երեւայ , եւ որմէ իրրեւ նմոյշ ունինք Գոլէճին հայ սաներու կողմէ թարգմանուած ու հրատարակուած Տօնացոյցը :

Ճշմարտութենէն տարբեր բան մը ըսած պիտի չըլլամ՝ յայտարարելով թէ իր դասերէն շատ չէինք օգտուեր : Բայց Գոլէճի բոլոր աշակերտներուն ու ընթացաւարտներուն զգացումը յայտնած պիտի ըլլամ՝ ապահովաբար նոյն ատեն , երբ յայտարարեմ թէ իր մեկնումը կորուստ մըն է Ռ. Գոլէճի . իր ձգած բացը զգալի պիտի ըլլայ այդ հաստատութեան մէջ :

ՏՈՔԹ. ՅՈՎԱ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՃԱՆՃ ՎԱՐՈՂ ԱՂՋԻԿԸ

(Հ Է Ք Ե Ա Թ)

Ժամանակին աղւորիկ աղջիկ մը կար , աղքատիկ ծնողաց մէկ հատիկ զաւակը , որ Աստուծոյ օրը՝ իր ձեան պէս ճերմակ թօմպուլիկ թեւերը ստիպած՝ Տեղիքն կը գործէր , չրթրփրթ . . . մաքօքուք . . . չրթրփրթ , մաքօքուք . . . , մի եւ նոյն ատեն մեղմուճայն երգելով սիրոյ անուշ անուշ երգեր :

Թռչնիկ մը՝ ստրտիկ , նախուսիկ , ամէն օր կուգար կը թառէր աղջկան Տեղիքն վրայ՝ եւ իր խօլ ճուռողիւնը խառնելով անոր անուշ երգին հետ , անգաղար կը կրկնէր . — Աղջիկ , գլուխդ տար (1) պիտի գայ , աղջիկ գլուխդ տար պիտի գայ . . . :

Եւ աղջիկը՝ որ ձագեղմար (2) գիտէր , հասկնալով թռչնիկին երգը , պահ մը տխրութեան թեթեւ փոթփոթումով մը կը խոծուէր . բայց շուտով նորէն կը վերստանար իր միամիտ զուարթութիւնը եւ կը շարունակէր իր անուշ երգը՝ մինիկիկ ձեռքերուն մէջ անգաղար տարուբերելով մաքօքուք խօլաշաւ չրթրփրթ , մաքօքուք . . . չրթրփրթ , մաքօքուք . . . :

* * *

Գարնանային գեղեցիկ օր մը ուր լեռ սար երեսդ ի վեր կը խնդային ժպիտներով դաւարաշող եւ օգին մէջ համաձայնալ կը ծածանէին լոյս ծիծաղներ ծփփուռն , աղջիկը ձգեց Տեղիքն եւ իր ծնողաց հետ պտոյտի ելաւ դաշտերը՝ վայելելու համար քիչ մը բնութեան չքնաղ շքեղութիւնը : Պտտելով պտտելով՝ հասաւ դաւարաւէտ հովիտ մը ուր զմբռնաւոր կանանչութեան մը մէջ կը փրթ-

(1) Տար = փորձանք

(2) Ձագեղմար = թռչնոց լեզուն : Գաւառներու մէջ կը հաւատան թէ թռչուններն ալ լեզու ունին եւ զիրար կը հասկնան : Ձագեղմար կըսուի նաեւ տեսակ մը ծածկախօսութեան ուր բառերու իւրաքանչիւր վանկին մէջ ձ ձայնը կը կրկնուի որով խօսակցութիւնը տեսակ մը ճուռողութեան կերպարանք կ'առնէ , զորօրինակ ըստ այդ ծածկախօսութեան «ուր կերթաւ կոր» խօսքը պէտք է ըսել «ուճուր կեճեր թաճաւ կոճոր» եւ այլն :

թէին խիտ առ խիտ երկներանգ ծաղիկներ , տարաշխարհիկ դրվածական գունազեղութեամբ մը : Այդ ծաղիկներուն շատ հրապուրիչ տեսքը , անոնցմէ արձակուող խիտ անուշահոտութիւնը՝ որ իր ունգունքը կը մրմնացնէր զգլխիչ խողտութեամբ մը , անդիմադրելի գրգռող մը ազդեց իրեն՝ մխրճելու այդ հովտին մէջ , քաղելու համար անոր դրվածական ծաղիկներէն : Ու աղջիկը՝ գուարթ , միամիտ , ժպտուն , ուսուստելով , թառելով ծաղիկէ ծաղիկ , անսովոր արքայութեան մը մէջ մոռցած ամէն բան , քաղեց , յառաջացաւ հովտին մէջ , ու մէյմնալ ինքզինքը գտաւ հսկայ բաց դրան մը տակ : Ներս նայելով տեսաւ սկիւզող մարմարէ աղբիւր մը որմէ ջրն ջուր մը արծաթեցայտերով կը ծորէր ծորան ծորան , ծառաւի օխորժակները գրգռելով : Միամիտ աղջիկը բռնաւ պապակ մը զգաց խմելու այդ ջրէն ու ներս մտնելով՝ յագեցուց ծարար : Բայց մինչ գուրս ելլելու վրայ էր՝ յանկարծ դրան երկու փեղկերը , կարծես անշմարելի զօրութենէ մը մղուած , շառաչմամբ ինկան փակուեցան : Աղջիկը՝ դուրս ելլելու համար փորձեց դուռը բանալ , բայց հսկայ դուռ ա՛յնպէս ամուր փակուած էր՝ որ բացուիլն իսպառ անհնարին էր : Այն ատեն սոսկմամբ , ու ահաւիրքով լեցուած՝ շուրջը դիտեց , Բարձր ու ամրակուռ պարիսպներով շրջափակուած տեղ մը կը գտնուէր : Եւք մը գտնելու յուսով դարձաւ պտտեցաւ ամէն կողմ , բայց ախոս՝ , պարիսպը ամէն տեղ կը կանգնէր նոյն յուսահատեցուցիչ բարձրութեամբ : Այն ատեն միտքն ինկաւ թռչնիկին գուշակութիւնը . « աղջիկ , գլուխդ տար պիտի գայ » . . . ու սկսաւ լալ , ողբալ , փետտուիլ , եւ աղիւղորմ աղաղակներով կանչել իր սիրական մայրն ու հայրը , որոնք անշուշտ դուրսը զինքը կը փնտռէին . բայց ի զո՛ւր , հէք աղջկան ողբն ու աղաղակները չէին կրնար դուրս թափանցել եւ բարձր ու թանձրակուռ պարիսպներուն զարնուելով կը փշուռէին ու կը մարէին :

* * *

Հէք աղջիկը երկար ատեն այսպէս լալէ ողբալէ յետոյ՝ երբ քիչ մը հանգարանեցաւ , աչքը չորս կողմը պտըտցնելով տեսաւ թէ

պարսպէն ներս մագական շէնք մը կը բարձրանար՝ համակ ոսկեզօծ , եւ աղամանդներով ու գոյնզգոյն քարերով դրուագուած , որոնք արեւուն վառ ճառագայթներուն տակ կը ճաճանչէին ծիրանի գօտու երկներանգ ցոլարձակումներով : Որո՞ւն էր այդ շէնքը , արդեօք ոգիներու կամ պարիկներու դրվական բնակարան մըն էր , ի՞նչ էր , ո՞վ գիտէր . . . :

Աղջիկը արհուրաղից շագմամբ ժամանակ մը դիտելէ յետոյ՝ վերջապէս համարձակեցաւ երթալ գէպի հան , եւ ներս մտնելով , ինքզինքը գտաւ սխնագարդ փառայեղ սրահի մը մէջ որուն երկու կողմը քառասուն սենեակներ կը շարուէին քովէ քով : Աղջիկը ետեւէ ետեւ այդ սենեակները մէկիկ մէկիկ բանալով եւս քան զեւս զարմանք ու ապշութեամբ տեսաւ որ անոնցմէ մին արծաթով , միւսը՝ ոսկիով , ուրիշ մը ագամանդով , ուրիշ մը՝ մարգարտով եւ միւսները տեսակ տեսակ թանկագին քարերով լեւի լեցուն էին մինչեւ բերանը . ու մին ալ ամբողջ պաքսիմատով , վերջապէս քառասներորդ սենեակը բանալով տեսաւ թէ հոն երիտասարդ գեղանի կտրիճ մը մենաւորիկ պառկելու կը քնանայ մշիկ մշիկ : Աղջիկը զմայլեցաւ կտրիճին գեղեցկութեանը եւ ա՛լ ինքզինքն այդ տեղէն ազատելէ յուսահատ՝ մտածեց հսկել անոր գլխուն վերեւ եւ ճանձները վարել մինչեւ որ արթննայ :

* * *

Այս կտրիճ երիտասարդը տէրն էր այս մագական հրաշալի շէնքին ուր այսպէս կ'արգիլուէր հէք աղջիկը : Կտրիճը եօթը տարուան քունի պառկած էր , եւ երբ այս երկարատեւ քունէն արթննար՝ իր սիրտը , իր բոլոր հարստութիւնը պիտի տար այն անձնուէր աղջկան զոր պիտի գտնէր իր գլխուն վերեւ : Աղջիկը թէեւ անտեղեակ այս պարագաներուն , բայց միամիտ համբերութեամբ հսկեց կտրիճին գլխուն վերեւ եւ անոր ճանձը կը վառէր , յուսալով որ երբ արթննայ՝ գուցէ իրեն բարիք մը քնէ : Կամայ կամայ անոր ճանձը վարելը իր սիրելի զբաղումն եղաւ այս լացարձակ առանձնութեան մէջ եւ ժամանակ անցնելով զգաց որ նոյն իսկ իր կոյս սրտին

մէջ սիրոյ մազմազ զգացումներ հրահրիլ կը սկսին եւ վերջապէս սրեց կտրիճը . . . եւ օրէ օր հեշտ անձկութեամբ մը կ'սպասէր ա- նոր արթննալուն . . . Այսպէս անցան եր- կար տարիներ ու տակաւին կտրիճը կը քնա- նար հանգարտ ու մշիկ մշիկ . . .

Օր մը ձայնը յայտնի լինելու մէջ , աղ- ջիկը մտածեց թէ արդեօք չէ՞ր կրնար մէկը գտնել ու միջոցով մը ներս առնել այս անմա- տոյց չէնքէն . որպէսզի գէթ անոր ընկերակ- ցութեամբը մեղմացնէ քիչ մը իր առանձնու- թեան տառապանքը : Ելարաններ գտաւ ու ելարան ելարանի կցելով յաջորդեցաւ պարսպին վրայ ելլել : Անկէ վար նայելով տեսաւ թէ կարաւանէն ետ մնացած ու ճամբան կորսն- ցուցած գնչուհի մը կը պտտի մոլորուն քայ- լերով : Ձայն տուաւ անոր եւ առաջարկեց որ ներս գայ : Գնչուհին յօժարեցաւ , ուստի աղ- ջիկը չուան մը երկնցուց պատէն վար եւ այն չուանով վեր քաշեց գնչուհին ու ներս առաւ : Անկէ յետոյ այդ գնչուհւոյն հետ կենակցե- լով անձա՛նձիբ կ'անցունէր օրերը , միշտ ճանճը վարելով իր սիրական կտրիճին որ կը նիրհէր դեռ մշիկ մշիկ :

Անգամ մը աղջիկը պէտքի մը համար դուրս ելած էր կտրիճին քովէն եւ գնչուհին անոր տեղն անցած կը վարէր ճանճը : Յան- կարձ կտրիճը աչքերը բացաւ . . .

Երբ քիչ մը վերջ աղջիկը սենեակ վերա- դարձաւ , տեսաւ որ կտրիճն արթնցեր ելեր է եւ գնչուհւոյն սիրալիր խօսքեր կ'ուզէ : Աւա՛ղ , կտրիճին քունին օրը ճիշտ այդ միջո- ցին ընկեր էր . եւ այն պահուն երբ կ'ար- թընար , իր գլխուն վերեւ գտած էր գնչու- հին եւ անշուշտ անոր պիտի տար իր սիրտը . . . Խորամանկ գնչուհին բնաւ չուզեց յայտնել ճշմարտութիւնը եւ այնպէս մը ձեւացուց թէ ինքն էր որ ամբողջ եօթը տարի ճանճը վա- րած էր կտրիճին եւ այնպէս ալ համոզեց զանի :

Անմիջապէս չէնքին փակուած դռները բացուեցան եւ փառաւոր հարսնիքի մը պատ- րաստութիւնները տեսնուիլ սկսան :

Երբոր հարսնիքին օրերը մտեցան , կտրիճն ուզելով իր մօտ գտնուող միւս աղջկան ծա- ուայութիւնն ալ վարձատրել . հարցուց անոր . — Աղւո՛ր աղջիկ , ըսէ ինձի , ի՞նչ կուզես որ տամ քեզի , ի՞նչ կուզես որ ընեմ քեզի : — Ուրիշ բան չեմ ուզեր , ո՛վ բարի երիտասարդ , ըսաւ հէք աղջկին արիւնած սրտով , բայց միայն ածիլի մը , խաւնաճիկ մը , եւ սապր ճաշի մը :

Կտրիճը զարմանալով հանդերձ աղջկան յայտնած այս տարօրինակ փափաքին վրայ , անմիջապէս բերել տուաւ անոր ուզածները եւ տարաւ իրեն : Աղջիկը զանոնք առնելով ստալի անկիւն մը առանձնացաւ , խամաճիկը , սապր ճաշին ու ածիլին քով քովի շարեց եւ անոնց դիմացն անցնելով սկսաւ մէկիկ մէկիկ պատմել իր գլխուն եկած բոլոր տարերը , թռչնիկին գուշակութեան օրէն սկսեալ մինչեւ այն դժբախտ վայրկեանը ուր կտրիճին գլխուն վերեւէն պահ մը հեռանալովը գնչուհին յա- փրշտակած էր իր բախտը . պատմեց ու լա- ցաւ , անդադար կրկնելով . — Մտիկ բրէ , խա- մաճիկս , համբերէ՛ ով սապր ճաշի (1) : Յան- կարձ սապր ճաշին շառաւիմով մը ճաթեցաւ ու փշոր փշոր եղաւ . . . Աղջիկը խուլ հա- ուաչանք մը արձակեց . — Օ՛հ , եթէ քարը չդիմացաւ ի լուր կրած տառապանքներուս , ես ի՞նչպէս կրնամ դիմանալ : Այսպէս ըսելով խօշ շարժմամբ մը խեց ածելին , բայց այն պա- հուն՝ երբ մահացու հարուածը կուտար կտրիճ- քին՝ ձեռք մը հասաւ ու խեց ածելին աղջկան ձեռքէն : Կտրիճն էր որ գաղտնապէս մտիկ ըրած էր աղջկան պատմութիւնը եւ լացն ու կոծը . ու պատեհ ժամուն կը հասնէր ար- գիլելու անոր ինքնասպանութեան սեւ խոր- հուրդը :

Կտրիճն այնպէս ճշմարտութիւնը իմանալով անմիջապէս հրաման րրաւ , կ'ըսեն , որ խա- բերայ գնչուհին լեռները տանին ձգեն . եւ եօթը գիշեր ու եօթը ցորեկ տեւող փառաւոր հարսնիքով մը ամուսնացաւ անձնուէր աղջկան հետ որ երջանկութեան մէջ չուտով մոռցաւ իր անցած դառն օրերը :

ՅՈՎԷ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

(1) Սապր ճաշի = համբերութեան քար

ԱՐՅԵՍՏԸ ԱՐՅԱՄԱՐՅՈՒԱԾ

Ի. դարու առաջին դարացական տարե-
շրջանը աւարտելու վրայ է՝ Այս տարի
դպրոցէն ելլող աշակերտները նոր դարու մը
սեմէն պիտի սկսին իրենց գործնական կեանքը:

Շատ ժամանակէ ի վեր մեր ժողովրդեան
միջակ եւ աղքատ դասակարգի զաւակները,
դպրոցէն ելլելէն վերջ, ամէնքն ալ, դա
սատու կամ գրագիր կ'ըլլան: Այս երկու
պաշտօններէն զատ գործնական ասպարէզ
չիկայ գրեթէ մեր երիտասարդներուն համար:
Պատճառ մը չունինք հակառակը պնդելու թէ
ասկէ վերջն ալ այդ ընթացքը պիտի շարու-
նակուի եւ մեր վարժարանները ներկայ դա-
րուս մէջ ալ առատ առատ դաստառ եւ
գրագիր պիտի մատակարարեն մեզ, եթէ չի
փութանք առաջն առնել այս «ուսուցչա-
գրագրական» ողողումին:

Տնտեսական եւ հանրային օգտի աեսա-
կէտով շատ կարեւոր խնդիր մըն է տարիա-
զոր կ'արժէ պահ մը խորին ուշադրութեան
առարկայ ընել:

Մեր մէջ սա սխալ համոզումը գոյացած է
թէ քիչ շատ ուսեալ երիտասարդի մը համար
մեղք է արհեստաւոր ըլլալ: Ասկէ կը հետեւի
թէ արհեստը ստորին եւ անարգ բան մը
նկատուած է մեր մէջ, Հայր մը, որքան ալ
աղքատ ըլլայ, չուզեր իր զաւակը երկաթա-
գործ, ձուլիչ, կահագործ, գերձակ կամ
կօշիակար ընել. իր միակ նպատակն է մէկ
երկու սակի ամսականով վաճառականի մը
քով տեղաւորել զայն իբրեւ գրագիր: Զա-
ւակն ալ իր կարգին, դպրոցէն ստացած գա-
ղափարներով ինքզինքը շատոնց դիտունի
կամ գրագէտի տեղ դրած, իրեն անպա-
տուութիւն կը սեպէ այդ արհեստներէն մէկը
ասպարէզ ընտրելը եւ նախապատիւ կը հա-
մարի դպրոցէն ելլելէն վերջն ալ իր աղքատ
հօրը կամ մօրը հացովը ապրիլ քան թէ ար-
հեստաւորի անունը կրել իր վրայ:

Մեզմէ անբաղդատելի կերպով մեծ ազ-
գեր չեն արհամարհներ արհեստը եւ անոնց
զաւակները իրենց պատիւ կը սեպեն արհես-
տաւորի զիրքը: Ֆրանսա, Անգլիա, Գեր-

մանիա, Ամերիկա եւ ուրիշ մեծ ժողովուրդ-
ներ, խորին բմբունումով մը համազուած ըլ-
լալով թէ իրենց տնտեսական յառաջդիմու-
թեան ամենամեծ մասը արհեստներու զար-
գացման կը պարտին, ամէն ջանք ի գործ
կը դնեն սրպէս զի արհեստի սէրը օր ըստ
օրէ աւելնայ, ընդհանրապէս իրենց մէջ:
Արհեստին կարեւորութիւնը շատ հինէն սկսած
է զգալի ըլլալ եւ անոր ծագումը մարդուն
պատմութեան հետ կը սկսի, անոր հետ կը զար-
գանայ, կը կերպարանափոխուի, կը մեծնայ
եւ կը հասնի անանկ հոյակապ վիճակի մը որ
այսօր մարդ չի կրնար իր հիացումը զսպել
անոր անհուն ու փառաւոր հրաշալիքներուն
առջեւ:

Ինչպէ՞ս կարելի է ցաւ չգգալ եւ չի տխրիլ
տեսնելով որ մեր ժողովուրդի զաւակները,
ստանց բմբունած ըլլալու արհեստին այս ա-
մենամեծ կարեւորութիւնը, կ'արհամարհեն
զայն եւ չեն կրնար զատուիլ դաստառի եւ
գրագրի ողորմելի կեանքէն: Քսան, երեսուն
տարիներ դաստառութիւն ընելէ վերջ այսօր
ապրելու միջոցներէ զուրկ գտնուող դասա-
տուներ, իրենց կիներ ու զաւակները խրճիթի
մը ցուրտ սենեակին մէջ անօգնական թողլով
Ազգ. Հիւանդանոցին մէջ յուսահատ մեռնող
ուսուցիչներ, վերջապէս անօթութեան չղի-
մանալով անձնատպանութեամբ իրենց կեան-
քին վերջ տուող դաստիարակներ մեր աչքին
առջեւ ունենալով հանդերձ, չենք վարանիր
դարձեալ դիմելու Քննիչ Յանձնաժողովին
անկէ ստանալու համար ուսուցչական վկայա-
կանը, զրկանքի եւ թշուառութեան այդ
զատակները:

Գրագիր երիտասարդներուն վիճակն ալ
վար չի մնար դասատուներու վիճակէն:

Մեր վաճառական աղաները, ընդհանրա-
պէս զուրկ մտքի եւ սրտի զարգացումէ,
ընական հակակրօթիւն մը կը զգան քիչ շատ
զարգացեալ դասակարգին դէմ. այս պատ-
ճառաւ առիթը չեն փախցներ բնաւ իրենց
ձեռքին տակ գտնուող անփորձ երիտասարդ-
ները նախատելու եւ ստորնացնելու: Անոնց
հետ սպասուորի մը պէս կը վարուին սովո-
րաբար եւ գրագիրը որքան ալ իր արժանա-
պատուութեան նախանձախնդրի մէկը ըլլայ,

չէ կարող տրտնջալ չօրպաճիին այդ տմարդի վարմանցը դէմ: Հացէն զրկուելու վախը ուրուականի մը պէս իր աչքին առջին է միշտ: Պէտք է համբերել, եւ այդ ստորնացուցիչ համակերպութեան մէջ քիչ քիչ կորսնցնելով իր նկարագիրը, զլսուն զարնուած, տխուր էակ մը կը դառնայ անիկա, բոլորովին զուրկ անհատականութեան ոգիէ:

Այս զրկանքներուն փոխարէն, այդ ողորմելիներուն նիւթական վիճակը գէ՛թ ապահով նկատուէր՝ կրնայինք քիչ մը միտթարութիւն զգալ: Յաւային հոն է որ թաղաքներէ մէկ քմահաճոյքը կամ բարկութիւնը կրնայ մէկ վայրկեանի մէջ զրկել զիրենք ապրումնոր միջոցէ:

Գազդիոյ մէջ Արհեստից վարժարաններու շրջանաւարտներու մեծ ընկերութիւն մը կայ: Այդ ընկերութեան 1901ի տարեգրքին մէջ 6031 ընկերներու անունները, զաւազմները, հասցէները եւ որ թուականներուն դպրոցէն ելած ըլլալը նշանակուած է:

Այդ 6031 շրջանաւարտներու մէջ մեկ հատ միայն գրագիր կայ:

* * *

Մեր գրագիր եւ դասատու երիտասարդներուն արգահատելի վիճակը պարզելէ ետքը, քննենք թէ որո՞նք են մեր ժողովուրդը արհեստներէն հեռու պահող գլխաւոր պատճառները:

Երեք պատճառ ցոյց պիտի տանք հոս:

Ա. — Մեր արհեստաւորներուն աննախանձելի վիճակը:

Բ. — Արհեստի սէրը ժողովրդեան մէջ տարածելու մասին մեր հրապարակագիրներուն անձեռնհասութիւնը:

Գ. — Դպրոցներու մէջ մեր զաւակներուն տրուած միակողմանի պակաս դաստիարակութիւնը:

Այս երեք գլխաւոր պատճառները, ուրիշ պարագաներու հետ միացած, այն աստիճան պաղեցուցած են զմեզ արհեստներէ, որ այսօր շատ տարօրինակ եւ զարմանալի բան մը պիտի երեւար, եթէ դպրոցէ շրջանաւարտ երիտասարդի մը երկաթագործութեան արհեստը ընդգրկած ըլլալը իմանայինք:

Առաջին պատճառ՝ մեր արհեստաւորներուն աննախանձելի վիճակը ցոյց տուինք: Գիտէ՞ք, որքան չարաշար սխալած կրլանք, եթէ արհեստաւորներու անկեալ վիճակին պատճառը արհեստին վերագրենք: Մեր արհեստաւորները, գրէթէ ամէնքն ալ տգէտ եւ անձուկ գաղափարի տէր մարդիկ ըլլալով չեն կրցած օգտուիլ արհեստին իրենց ընձեռած բարիքներէն: Բազմաթիւ արհեստաւորներ կրնանք ցոյց տալ, որոնք թէպէտեւ ժամանակին յաջողած են կոկիկ հարստութիւններ ձեռք ձգել, բայց վերջէն չգիտնալով սահման դնել իրենց կիրքերուն, տեսակ տեսակ մոլութեանց մէջ փճացուցած են ճակտի քրտինքով շահուած իրենց այդ հարստութիւնը:

Արհեստաւոր մը իր ասպարէզին մէջ, բառին ընդարձակ իմաստով, յաջողելու եւ իր պատկանած համայքին օգտակար անհատ մը դառնալու համար անհրաժեշտ է որ զարգացեալ մտքի տէր եւ ըստ բաւականին ուսեալ ըլլայ: Առանց այս պայմաններուն, անիկա իր ամբողջ կեանքին մէջ միմիայն օրապահիկ մը կրնայ հայթայթել իրեններուն համար, առանց կարենալու օժանդակել երկրին ճարտարարուեստական զարգացման: Առողջ գաղափարներով զարգացած, նկարագրի տէր մղայ մը երբ համոզումով ձեռքը կառնէ երկաթագործին մուրճը, եւ կրակին դէմն անցնելով կը սկսի դարձնել կարծր երկաթը, անիկա չուտով կը յաջողի իր արհեստին մէջ եւ որքան ալ համեստ ըլլան իր սկզբնաւորութեան պայմանները, չուտով իր պզտիկ խոնովը կոկիկ գործարանի մը կը փոխուի ուր քիչ ատենէն ձեռքի գործիքներուն կը յաջորդեն Եւրոպայէն բերուած կատարելագործեալ գեղեցիկ մեքենաներ:

Ձեզի կը թողում հոս անկախ գործի եւ դիրքի տէր արհեստաւոր երիտասարդին եւ չօրպաճիին նախատինքներուն համակերպող գրագրին կամ թաղական Աղայէն ամսական մուրացող դասատուին վիճակները բաղդատութեան դնել:

Գալով երկրորդ պատճառին, ամէն օր թերթերու մէջ գեղարուեստի վրայ՝ նոյնպէս անտեսական, քաղաքական, գիտական կամ

ուրիշ ասոնց նման նիւթերու վրայ գրուած շատ մը բաներ կը կարգանք, բայց ձեռարուեստի ո՛ր եւ է մէկ ճիւղին վրայ գրուած հրատարակութեան բնաւ չենք պատահիր : Ամէն գրիչ շարժող այդ նիւթերուն վրայ կրնայ քիչ շատ ըսելիքներ ունենալ, բայց արհեստներու վրայ գրելը այնպէս չէ : Հրատարակողները, կեանքին մէջ տառնց վրձինի ձեռք դպցուցած ըլլալու, կրնայ նկարչի մը արտադրած մէկ գործին վրայ քննադատումի կամ գնահատումի գեղեցիկ տողերով սխեմաներ լեցնել թերթի մը մէջ : Բայց չքեղ ապարանքի մը սաղօններուն մէջ գտնուած փառաւոր կահ կարասիներուն սփիլին, ձեւին եւ փայտերու տեսակին, նոյնպէս մեքենագործական արհեստներու ո՛ր եւ է մէկ ճիւղին, այսինքն՝ երկաթագործութեան, ձուլելու (Fondre), խարտոցելու (Ajustage), ճախտակելու (Tourner), կամ կաշապարաշինութեան (Modeler) արհեստներու վրայ բան մը գրելու համար անհրաժեշտ է որ գրողը այդ արհեստներէն հասկցող մէկը ըլլայ : Մեր գրողներուն մէջ արհեստէ հասկըցող չի կայ, մեր արհեստաւորներն ալ իրենց կարգին կարգալ գրել չեն գիտեր, այս պատճառաւ արհեստներու վրայ բան մը չի գրուիր թերթերու մէջ :

Վերջինները տգիտութեան մէջ կը գտնեն իրենց արդարացումը, բայց առաջիններուն վրայ պատասխանատուութիւն կը ծանրանայ : Հրատարակագիրը եթէ չի կրնար արհեստներու վրայ մասնագիտական յօդուածներ գրել, գէթ կրնայ հրատարակել այն տեսակ գըրուածներ զորս ժողովուրդը կարդալով արհեստներու մասին իր տածած արհամարհանքը տեղի տայ համակրանքի, սիրէ արհեստը եւ համազուելով անոր ամենամեծ օգտակարութեան, իր վաւակը գրագիր կամ դասատու ընելու տեղ, աշխատի արհեստ մը սորվեցնել անոր, անկախ գործի եւ գիրքի մը տէր ընելու համար վայն ապագային :

Արհեստի սէրը մեր մէջ օր ըստ օրէ պակսելուն երրորդ պատճառ՝ դպրոցներուն մէջ տղոց ստացած սխալ ուղղութիւնն է, ըսինք : Ասիկա մեր ցոյց տուած երեք պատճառներուն ամենէն զլխաւորն է :

Տղայ մը դպրոցի գրասեղաններուն վրայ պէտք է սորվի ոչ թէ արհամարհել՝ այլ հոգումով մարմնով սիրել արհեստը՝ միակ միջոցը իր ապագայ գործնական կեանքի յաջողութեան : Մեր զաւակներուն մատաղ մտքին մէջ արհեստի սէրը տպաւորելու եւ զանոնք դպրոցին մէջ կամաց կամաց գործնական կեանքի սխալատեսելու հոգը մեր դասատուներուն պարտականութիւնն է : Դասատու մը կրնայ իր ուղած ուղղութիւնը տալ աշակերտին փափագներուն եւ ձգտումներուն : Մեր զաւակները փիլիսոփայ, գրագէտ, մտտենագիր կամ բանաստեղծ ըլլալու համար չէ որ դպրոց կը զրկենք : Անոնք ընդհանրապէս աղքատ հօր մօր զաւակներ ըլլալով, դպրոցէն ելլելէն վերջ իրենց հացը ձարելու հարկին մէջ պիտի գտնուին : Այս պարագան միշտ աչքի առջեւ ունենալով դասատուն պէտք է տղան ներշնչէ այն տեսակ գաղափարներ միայն որոնցմով կարելի ըլլայ օգտուիլ վարժարանէն դուրսի կեանքին մէջ :

Մեր վարժարաններէն ելող տղաք իրենց վիճակին բոլորովին անյարմար ձգտումներ կը տածեն : Շատ մը խեղճ երիտասարդներ կրնամ ցոյց տալ որոնք տառնց իրենց արգահատելի վիճակին գիտակցութիւնը ունենալու, գրականութեամբ եւ կոյսի, վարդի, սփռակի, չեմ գիտեր ինչի վրայ ստանաւորներ գրելով կանցընեն իրենց ժամանակը : Այս պիտիներուն իսէպն է գրագէտի համար վայելել եւ իրենց գրած մէկ յօդուածը կամ ստանաւորը թերթի մը մէջ հրատարակուած տեսնել, հոգ չէ, եթէ նոյն օրը հացագործը մերժած ըլլայ հաց ձգել իրենց տունը :

Քանի մը տարի առաջ, իմ մէկ ձկնորս բարեկամին տղան մեր տունը գալով խնդրեց ինձմէ որ իր գրած մէկ վէպը այնինչ թերթին արտօնատիրոջ ծախելու միջնորդեմ, իրեւ թերթօն հրատարակուելու համար : Ինքը իրապաշտ գրականութեան սիրահար մըն է եղեր եւ այդ վէպը Զօլայի հետեւ ուղղութեամբ գրեր է : Աստուղ կտրեցայ այս անակնկալ առաջարկութեան առջեւ : Գիտէ՞ք ինչպէս կը սկսէր այդ համաւաւոր վէպը, որ աւելորդ է ըսել, ըստ չի տեսած գերեզման իջաւ : Ասոնք էին անոր առաջին տո-

ղերը, «Գարնան գեղածիժաղ առաւօտ մը Գեր. . . սրբազան Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցւոյ մէջ պատարագ կը մատուցանէր եւ քաղցրանուագ դպիրները խորհուրդ խորհին անուշ եղանակով օգը կը լեցընէին, . . . եւն.» : Ձի կրցայ խորին ցաւ չզգալ այս խեղճ աղուն վիճակին վրայ, որ դէմս նոտած ջանքեր կ'ընէր իր մաշած կօշիկին պատուած մատերը չի ցուցընելու : Մտածեցի . ո՛րքան մեծ բարիք մը բրած պիտի ըլլային իր դասատուները եթէ գրականութեան տեղ արհեստի սէրը ներշնչէին իրեն : Այն ատեն իրապաշտ գրականութեան սիրահարելու փորձանքին մէջ չը պիտի իյնար գէթ այդ խեղճ երիտասարդը :

Շատ մեծ եւ դժուար գործ մըն է տղայ պատրաստելու արհեստը : Երբ անփորձ երիտասարդներ, առանց կօշում եւ պէտք եղած հմտութիւնը ունենալու, հացի դրամ չահելու համար միայն, դաստառութեան ասպարէզը կը մոռնեն, դժուար չէ երեւակայել թէ ի՞նչ կ'ըլլայ այնպիսիներու խնամքին յանձնուած աղաքներուն վիճակը :

Յաւալի է ըսել, թէ մեր դաստառներուն մեծ մասը այդ դասակարգին կը վերաբերին : Մեր զաւակներուն իրենց վիճակին յարմար դաստիարակութիւն մը տալու եւ անոնց մշտնջենքին մէջ վերացական եւ գրական սկզբունքներու հիմերը հաւատարապէս ուժով հաստատելու համար, իրենց պաշտօնին մեծութեան գիտակից, կարող ուսուցիչներու գոյութիւնը անհրաժեշտ է :

Տղան իր դասատուին ազգու խօսքերէն հաստատ ըմբռնումով մը պէտք է համոզուի թէ վսեմին, բարին եւ գեղեցկին գաղափարներէն զատ կան նաեւ օգտակարին եւ կարեւորին գաղափարները, որոնք անհրաժեշտ են իրեն կեանքի պայքարին մէջ յաղթող հանդիսանալու համար : Տղան վարդին, սոխակին, կոյսին չափ պէտք է սորվի սիրել նաեւ պողպատը, երկաթը, հանքածուխը, չօգին, մեքենան եւ գիտնայ թէ ասոնք արհամարհելը ո՛ր աստիճան վնասակար արմատութիւն մըն է :

Այս համոզումներով դպրոցէն ելող տղայ մը չի պիտի զիջանի գրագիր կամ դասատու

ըլլալով մաշիլ, հասնիլ թշուառութեան մէջ . անկիա հոգուով մարմնով պիտի փարի արհեստին եւ անոր մէջ պիտի փնտռէ ու գտնէ իր բոլոր փափաքներուն եւ ձգտումներուն գոհացումը :

ԵՐՈՒԱՆԻ ԶԱՎՈՒՇԵԱՆ

Հրապարակային անկեղծ շնորհակալութեան պարտականութիւն մը եւս ունիմ Մանգրումի էֆէնար օրաթերթին, որ վաղամեռ եղբորս՝ Ալիքսան Արիւարեանի մահուան տոթիւ այնքան համակիր ու ցաւակից տողեր նուիրեց անոր յիշատակին : Բերկութեամբ ողջունելով այդ օրաթերթին վերաբացումը, կը փութամ սրտագեղ զգացումներս յայտնել անոր յարգելի Տնօրէնին՝ Յովհաննէս էֆէնարի Գայսէրեանի որ իր խմբագրական մարմինն հետ անձամբ ներկայ դտնուեցաւ յուզարկաւորութեան : Շնորհակալութիւն, մասնաւորապէս, Հայկ էֆ. Սօմաուրեանի եւ Արրահամ էֆ. Այվազեանի որոնք Մանգրումի մէջ իրենց գրած քներով անկեղծ բարեկամութեան ու վշտակցութեան հաւատարմք մը տուին, ինչպէս ազգ. բոլոր օրաթերթերն ու շաբաթաթերթերը որոնց յայտնած շնորհակալութիւնն շատ տկար մէկ արձագանգը եղաւ զգացումներուն : Նոյն շնորհակալ զգացումները Արեւելի երկու յարգելի յօդուածագիրներուն, «Արէտ»ի եւ «Յուսակ»ի որոնք իրենց Շաբաթական Նօթերուն մէջ աղնուութիւն ունեցան պատուարեք յիշատակութիւն մը ընել հանգուցելոյն անձին ու պաշտօնավարութեանը նկատմամբ :

Տ. Ս.

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ս. Հայրապետ յունիս 25ին էջմիածնէն մեկնելով Հաղարծնի վանքը դայեր է ուր մէկ քանի օր մնալէ ետքը Սանահնի վանքը պիտի երթայ եւ կը յուսացուի որ անկէ ալ թիֆլիզ այցելէ :

Ս. Պատրիարք Հայրը կիրակի առաւօտ հանգիստաւոր Պատարագ մատուցեց եւ քարոզ խօսեցաւ Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցին

որուն տօնախմբութիւնն էր : Միջօրէին , սեղանի հրաւիրուեցաւ Ստրէնեան Տեարց ընա-կարունը ուր հիւրերնկարուեցաւ նոյն գիշերը :

Կայս. Գնահատում. — Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Սալիսէի ատրիճան շնորհուած է Տօքթ. Կոմիտաս Էֆ Օրմանեանի որ վերջերս անդամ անուանուեցաւ Քաղաքապետութեան առողջապահական Խորհուրդին , եւ Դ. Կարգի Մէճիտիյէ պատուանշան՝ ճարտարապետ Գրիգոր Էֆ. Մէլիտոսեանի որուն աշխատութիւնները մեծապէս զնահատուած են Արմաշու Դպրեվանքին , Ազգ. Հիւանդանոցին եւ ուրիշ ազգ. հաստատութեանց ու եկեղեցիներու շինութեան ու վերանորոգութեան առթիւ :

— Նոյնպէս գոհութեամբ կը ծանուցանենք թէ Գ. Կարգի Մէճիտիյէ պատուանշան շնորհուած է Իզմիրցի ծանօթ ժառանգարն Գէորգ Էֆ. Պուպլիի : Պուպլի Էֆ. , որ գրականութեան մէջ ալ իր ինքնայատուկ տեղն ունի , իր յորգի աշխատակցութիւնը սկսած է նուիրել Մախանն ուր երեւցան արդէն իր երկու գեղեցիկ յօդուածները : Զերմապէս կը շնորհաւորենք զինքը այն պատուին համար որուն կ'արժանանայ :

Ծանօթ երաժիշտ Արամ Էֆ. Բժշկեան մանկապարտէզներու յատուկ երգարան մը պատ. րասած է եւ կրթական նախարարութեանէն տպագրութեան արտօնութիւնը ստացած : Բայց այդ երգարանը եւրօպական ձայնանիշերով տպագրել տալու համար 30 ոսկի կը կարօտի հեղինակը , որ մեկենասի մը նուիրատուութեանը կ'ըստատէ :

Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը ամէն յորիերու չափազանց խնայեալ վիճակը եւ ամէն կարգի պատասխարելոց հետզհետէ աւելնալը , մանաւանդ յիմարանոցի արդի կացութիւնն եւ յիմարներուն անդադար աճիլը նկատողութեան առնելով , ինչպէս կը կարգանք Բիւզանդիոնի մէջ , խնդրեր է Պատարարքարանէն որ շրջաբերականով մը զեկուցուի գաւառական առաջնորդներուն եւ տեղապահներուն , ժամանակ մը զարբեցնել յիմարներու առաքումը եւ տեղական միջոցներով պատասպարել զանոնք , մինչեւ որ Հիւանդանոցը ի վիճակի ըլլայ ընդունիլ այսպի-

սիները եւ գիտութեան պահանջմանց համաձայն խնամել զանոնք :

Պերպերեան Վարժարանի այս տարուան շրջանաւարտներու (որոնց անուններն հրատարակեցինք նախորդ թիւով) վկայականաց եւ աշակերտներու մրցանակաց բաշխման հանդէսը տեղի ունեցաւ երկուշաբթի օրը նոյն վարժարանին մէջ : Հանդէսին նախագահեց Ս. Պատրիարք Հայրը : Նախ երգուեցաւ կայսերական Համիտիյէ քայլերգը որուն յոանկայս ունկնդրեցին հանդիսականները : Վկայականներու եւ մրցանակներու բաշխումէն ետքը , Պերպերեան Էֆ. իր վերջին յորգորները տուաւ շրջանաւարտներուն որոնցմէ Պ. Յ. Հաջարապետեան իր ընկերակիցներուն կողմէ երախտագիտութիւն յայտնեց վարժարանին Տնօրէնութեան : Հուսկ յետոյ խօսք առնելով Ս. Պատրիարք Հայրը , զրուտեց Պերպերեան Թէթէոս Էֆ.ն որ 25 տարի է ի վեր Պետութեան հովանաւորութեան ներքեւ յաջողած է Տէրութեան եւ Ազգին օգտակար անհատներ պատրաստել : Ն. Սրբազնութիւնը յիսկեց հանդէսը , բարեմաղթութիւններ ընելով Վեհ. Սուլթանին արեւշատութեանը համար :

Գեղարուեստական. — Բարիզ գտնուող ծանօթ հայ նկարիչ Պ. Բաշինջաղեան երեք մեծագիր պատկերներ նկարեր է , կը գրէ Սուրհանդակ. զորս այս օրերս Թիֆլիզ պիտի դրիկէ , Կովկասեան ցուցահանդէսի գեղարուեստական բաժնին մէջ դրուելու համար : Այդ նկարներէն մէկը կը ներկայացնէ գետ մը՝ լուսնածագի պահուն , երկրորդը՝ լիճ մը անձրեւի տակ եւ երրորդը՝ ամրոց մը կիրճի մը մէջ :

Աղբիւնուպոլսոյ Արշակունեան եւ Հռիփսիմեան երկուսեւ վարժարանի մրցանակաբաշխութեան հանդէսին մանրամասն նկարագրութեանը մէջ , զոր հրատարակեց Արեւելք , կը կարդանք . «Հանդիսականներէն մէկը որ ուզած է անծանօթ պահել իր անունը , հանդէսին աւարտելէն ետքը յայտարարած է թէ պատրաստ է դարձցնել համար նոր դրամներ շինել տալ իր խիստ ծախքովը» :

Յայիսկոպոսական ձեռնադրութիւններ պիտի կատարուին Էջմիածին յառաջիկայ

սեպտեմբերին : Մայր Աթոռէ՝ տեղեկութիւն
կուտան թէ լայի Թրքահայ երեք վարդա-
պետներէ, Կովկասէն ալ երեք վարդապետ-
ներ պիտի բարձրանան եպիսկոպոսական աս-
տիճանի :

ՀԱՄԵՍՏ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

Երուսաղեմատան նորոգութեան ասիւն,
որ աւարտելու մօտ է, Մանգումեի Էփեսա-
կը հրատարակէ այդ չէնքին Յիշատակարանը՝
իրոյ նմոյշ մը ամիրաներու արձանագրութեանց :
« Բանասէր ընթերցողը, կըսէ մեր պաշտօնա-
կիցը, առաջին ընթերցումով անհասկնալի
խօսքեր պիտի նշմարէ անոր մէջ, խօսքեր ու-
րոնք հանելուկներ պիտի թուին իրեն եւ . . .
իրօք այնպէս են : Այս յիշատակարանը գրողը
դիտում ունեցած է յայտնել բարեբարներու
անուանները, բայց ծածկել անոնց . . . անձը,
անշուշտ իրենց իսկ յանձնարարութեամբ » —
ինչ որ հին բարեբարներու համեստութեան
յատկանշանակուն մէկ կողմը կը պատկերացնէ :

Աւստիկ այդ արձանագրութիւնը .

Տօղ կըսեմք՝ Փրկչին խնամոց,
Ծաղկեալ եցոյց սուրբ Ժամն Հայոց,
Խամբեալ տնկոց՝ որպէս աղբիւր,
Եւ Յարութիւն՝ յարութեամբ իւր :
Յաւել ընդ նոյն՝ զՀոգի արի,
Ոգել առնել՝ միշտ ըզբարի,
Հրեշտակ կոչեալ՝ կցող շաղագ՝
Երգէ ոմ է՝ որպէս Աստուած :
Զարդ ոսկեհոտ՝ եռափնեակ,
Մեզ յԱստուծոյ՝ փառաց պսակ :
Ակնարկութեամբ՝ սոցին յաւետ,
Յարկըս շինի՝ վայելչակերտ :
Յաջողութեամբ՝ Տեառն Արարչին,
Գեղեցկագոյն՝ քան զառաջինն :
Որպէս Փիւնիկ՝ ծախեալ ի բոց,
Կանգնի նորոգ՝ յիւրոց մոխրոց :
Երուսաղեմ՝ գերաշխարհիկ,
Որ են բազում՝ ուխտատեղիք :
Անդ է վաճը մեր՝ երկնամագոյն,
Սուրբ Յակոբայ՝ Առաքելոյն :
Որ նուիրի՝ այս շքեղ տուն
Ի յաւիտեան՝ ժառանգութիւն :
Մինչ նոյն տեղոյն՝ էր Պատրիարք,
Տէր Դարբիկ՝ տեսուչն արք :
Եւ Պատրիարք՝ Բիւզանդիոյ,
Տէր Ստեփաննոս՝ այլ Աստուծոյ :

Շինեալ ջանիք՝ Տեառն Յովնանու,
Վարդապետի՝ Զմիւռնացոյ :
Փոխանորդի՝ արուին մեծի,
Երուսաղեմ՝ սուրբ քաղաքի :
Նոր օրհնութիւն՝ Տեառն տացուք,
Որ արար գայս՝ շնորհ յատուկ :
Յամի Տեառն 1832 Օգոստոսի 3ին
— Վերանորոգեցաւ յամին 1901 —

Մանգումեի խմբագրութիւնը կը լուծէ այս
միութեալեան ոտանաւորը, ըսելով թէ Յիշա-
տակարանին հրդ տողին « Յարութիւն » բառը՝
Պէզնեան Յարութիւն ամիրան կը ցուցնէ,
Տրդ տողին « Հոգի » բառը՝ Ժանիկ ամիրան,
եւ Դրդ տողին « Հրեշտակ » բառը՝ Փիլմիշ Մի-
քայէլ ամիրան :


ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆՆԵՐ. — Մատ-
թէսեան Տպարանէն հրատարակուեցաւ Տ.
Բարգէն Մ. վարդապետի մէկ նոր երկտի-
րութիւնը Ժողովուրդին Տօնացոյցը, 87 էջէ
բաղկացած կոկիկ սիրուն տետրակ մը որ
պարզ ոճով կը բացատրէ շարժական եւ ան-
շարժ ածները, երգութիւնք շարականները,
տարուան բոլոր յիշատակելի օրերը, պար-
զատմարը, մշտնջենաւոր ածնացոյցը եւ ու-
րիշ եկեղեցական գործածական գիտելիքներ
որոնք մինչեւ հիմա եկեղեցականներու եւ
դպրապետներու միայն մատչելի կը համար-
ուէին եւ որոնք՝ շնորհիւ Գեր. հեղինակին
այս հրատարակութեան՝ պիտի ծանօթացուին
ամէն հետաքրքրուողի որ գէթ պարզ ընթեր-
ցանութիւն մը գրիտէ : Գին 3 դրշ, Վաճառ-
ման կեդրոնատեղին է Պալենց գրատունը :

— Հրատարակուեցաւ Սմատ Դաւթեանի
Նոր Դպրոցին Ե. պրակը (Տարրական Դա-
ւընթացք) : Այս պատկերազարդ գործը, ու-
րուն յաջորդ տետրակներն ալ մամուլի տակ
են, կը ղափանդակէ նախակրթութեան ամբողջ
գարնթացքը, համակերպոն գրութեամբ :
10 պրակին գինն է 25 դրշ, Վաճառման կեդ-
րոնատեղին է հրատարակչին գրասենեակը,
Սիրքէճի, Պօրտոմանճեան խան :

Արտօնատեղի Կ. Ս. Իիթիլիճեմն

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԷՈՍԵՆ

Կ. Պոլիս, Ֆինանսերէն Եղուշու, Թիւ 27



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ր Ի

Ձեռքի, ոտքի եւ ձեռքի ու ոտքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարեւորութեամբ, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՇԱՐԼՈՒՅԱՆ
ՄԱՍՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ Ժողոց, Կալաթա Մէրայի Լիւէին դիմաց.

ԿԱԼԱԹԱ. } 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին Դիմաց.

ՊՈԼԻՍ. } 1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյազիտ.

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքով.

Կատարեալ երաւիտանքներուն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊՍՏՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄԻՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ

34,775,642 Ֆրանք

երաշխաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ քաղաքին վրայ, Մաքսաւան ճիւղ

Ընդհ. Բնակիչ

Ընդհ. Գործակալ

Ա. Հիւրմիտի

ԹԻՆՏՈՐ ՌԵԲԵԼ

Ա Ր Ի Ս ԵՒ ԸՆԿ

ՇՈԳԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՋԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱԼԷ



Վաճառանիշ



Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտագրէ ամենանաւորը հոտեղէններ ինչպէս նաեւ թուայէթի հոտաւէտ եւ լուայքի պարզ օճառներ : Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանքի գէժ մրցելու առաւելութեան կը միացնէ գիններու գերազանց ամանութիւնը : Փափաքողներուն՝ քաթալօիք ձրի կը զրկուի :

Մեծաքանակ գնում ընել ուզողները կրնան գիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՕՍՏԻ ՊԱՔԵՒ Կ. ԻՆՃԻՃԻԵԱՆ ՈՐԴԻՔ վաճառատունները , իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ գիմել գործակալութեանց որ ի ստորեւ , ուր պիտի գտնեն նմոյշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով :

ԲԱՐԻՉ.—ՊՊ. Լաքառիեռ Որդի եւ Ընկ. 28 Ռիւ Շաքօտեօն :
 ՊՈՄՊԱՑ.—ՊՊ. Ապքար եւ Ընկ.
 ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ.—Պ. Մ. Գալֆաեան .
 ԳԱՀԻՐԷ.—Պ. Հ. Ռոզաքալ .
 ՌՈՒՍՃՈՒԳ.—Պ. Պ. Կ. Ինճիճեան որդիք .
 ՎԱՌՆԱ.—Պ. Կեռոն Արտիքի .

ԶՄԻՌՆԻՍ.—Պ. Հայնրիխ Վառնիկ .
 ՍԵՂԱՆԻԿ.—Պ. Տիեօ Ֆերնանտեզ .
 ԻԻՍԿԻԻՊ.—Պ. Մ. Քափուանօ .
 ՊԷՅՐՈՒԹ.—Պ. Ֆրանքել Շիֆֆեր .
 ՍԱՄՍՈՆ.—Պ. Պ. Պետրոսեան Եղարք .
 ՏՐԱՊԻՉՈՆ.—Պ. Արիս Կ. Ինճիճեան .

Հ Ա Ս Տ Ա Տ Ե Ա Լ 1884ԻՆ

ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐ

ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ

Թիւ 85 — Կալաքա , Վոյվոսա փողոց — Թիւ 85

Խիստ խնամով ու տարապայման աժան գիններով չափու վրայ կը պատրաստուին ամէն տեսակ չապիկ , օձիք , թեւնոց , գիշերազգեստ ու ներքին ձերմակեղէններ :

Միայն Ֆրանսական ու Անգլիական ընտիր տեսակ կերպականներու զանազանութեամբ օժտուած սոյն գործարանը տրամադիր է ընդունիլ ու կատարեալ հոգածութեամբ պատրաստել հարսանեաց ձերմակեղէններու յանձնարարութիւններ :

Կը ծախուին վերջին նորաձեւութեամբ խիստ ճաշակաւոր ու միշտ աժան գիններով օձիք , թեւնոց , ֆլանէլ , գոլպայ , թաշկինակ , ոսկեզօծ կոճակներ , փողկապ , դրամապնակ , զմիւրի «Չէֆիլտ» , խոզանակ , սանտր ու անուշահոտութեանց լաւագոյն տեսակներ :

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ վաճառատունը նորաձեւութեան , ապրանքի ազնուութեան , յանձնարարութեանց խնամով պատրաստութեան , ու գիններու ամանութեան տեսակէտով վստահելի ու լաւ յանձնարարելի լաւագոյն տուններէն մէկն է :

ԳԻՆՆԵՐԸ ՈՐՈՇԵԱԼ ԵՆ